

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար


Շարեկան փոք 10

Վեցամսեայ » 5

ՄԱՆԻՆ

20

ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արամանձան

Շարեկան փոք 12

Վեցամսեայ » 6

ՄԱՆԻՆ

20

ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՅՏԱԿԱՆ

Եր հրատարակուի հարստ օրերը : Մա-
կուցման տողը 10 Մանդիմ : Երկու ք/ա ա-
ռաջ հրատարակուած քերքը 40 Մանդիմ :
Հրատարակուած գրութիւնը եւ յտրոյր :

Հասցե

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN K. STEPAN

(BULGARIE)

VARNA

ԱԶԳԱՅԻՆ

—0—

Ն. Ս. Օծուծիւն վեհ. Հայրապետը
նկատելով որ կաթմուղիկոսական այցելու հո-
վիւ Գեր. Տ. Արսէն Ծ. Վ. Վեհուհիար-
դէն այցելած է Պուլկարիոն, այս անգամ
յատուկ կոնգրակու մը Աւստրիոյ ալ հոգիւ
կարգած է

Չինք կարծեր սակայն թէ Աւստրիոյ
Հայերը այնչափ խստապահանջ գտնուին Գեր,
Հայր սուրբին այս ձմեռ տառն զիրենք այ-
ցելելուն, ըստ որում իր ներկայութիւնը ա-
ւելի անհրաժեշտ է ի Պուլկարիոն, ուր հա-
ղարուոր գաղթականներ կան, որոնք հան-
րութեան գլխարկութիւնը իրենց վրայ հը-
րաւիրելու համար Գեր. Հօր քարոզներուն
պէտք ունին :

—0—

Կը լսենք թէ Գեր. Տ. Արսէն Ծ. Վ.
Վեհուհի Ն. Ս. Օծուծիւն կողմէ հրա-
հանգ ստացած է յորդորել Ռուսաճուգի Տէր
Ղեւոնդ քահանան, մեկզի զննելու իր ամուս-
նութեան գաղափարը, հակառակ պարագա-

յին մէջ Հայր սուրբը արածեալ է զայն
կարգալոյժ հրատարակելու, կարգալոյժ հը-
րատարակելով նաեւ այն քահանան, որ Տէր
Ղեւոնդը պիտի յանգանի պատկել :

Բոժ. — Չինք կարծեր որ Պուլկարիոյ
և Ռուսմանիոյ քահանայք Տէր Ղեւոնդին կին
մը տալու տառն մօրութիւնն ալ վրայ տալու
վտանգին ենթարկեն զիրենք :

—0—

Այ բառախնամ ընկերութիւնը շնոր-
հակալութեամբ կը ծանուցանէ թէ Մեծ
Տեար Անդրէասէր Մեղքոնեան ի նպաստ աղ-
քատաց նուիրած է Երեսուն ֆր. արծաթ :

—0—

Տեղւոյս հիւանդանոցին մէջ պատուար-
եալ խեղճերուն բաժնուկու համար անցեալ
շաբթու Աղքատ. Ընկերութեան 1 պարկ
լուրիա և մէկ պարկ բրինձ նուիրողն է Մեծ.
Տեար Աւետիս Պարոնեան : Նոյնպէս անցեալ
կիրակի 100 քիչո հացով 60 քիչո միս բաշ-
խել տուողն է Մեծ. Տեար Արիքսան Թո-
րոսեան :

—0—

Թերթերնիս մամուլը դրուած պտհուն գոհութեամբ տեղեկացանք թէ Մեծ . Տիար Կարապետ Յովասափեան իր կողմէ հարիւր կառք փայտ նուիրած է հիւանդանոցի պատկարները : Կառքերը սկսած են գալ և կը բաժնուին ձեռամբ Տիար Կիւլպէսէր Մեկրոնեանի :

—o—

Ուրախութեամբ լսեցինք որ Գեր . Արսէն Վարդապետի և Թաղ . Խորհրդոյ նախաձեռնութեամբ չքաւոր գաղթականաց փայտ և հաց հասցնելու համար առժամանակեայ Մասնագիտով մը կարգուած է , որոյ անգամը են :

Մեծ . Տիարք

Մաղաք Մինասեան ,

Սարգիս Ուղունպօղոսեան

Գաբրիէլ Սպէնչեան .

Թաղ . Խորհրդոյ կողմէ տեսրակ մը յանձնուած է յիշեալ Մասնախմբին , որ աղբայնոց մէջ հանգանակութեան պիտի ձեռնարկէ : Սոյն հանգանակութենէն գոյնալիք գումարը Ը.գ.բատախնամի օժանդակութեամբ պիտի գործածուի :

Քաջայոյս ենք որ աղբայինք իրենց լուծալն սիրայօժար և առատօրէն պիտի նուիրեն , գիտնալով որ սոյն հացի և փայտի բաշխումը միմիայն չորս ամսուան համար է :

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ

Անցեալ տարի , երբ գաղթականութեան յորդ հեղեղ մը քանի մը հազար Հայեր Պուլկարիոյ հողին վրայ նետեց խուճապով , Պուլկար Թերթ մը , իբրև ճշմարտագէտ հոգածու իր երկրին ու հայրենակիցներու շատերուն , հրապարակաւ յորդոր կարգաց բոլոր Պուլկարներուն , որպէս զի ամեն արհեստաւոր՝ նոր կորովով ու աշխուժով ղորացած՝ փութայ կատարելագործելու իր արուեստը , և տեղի չիտայ որ օտար ձեռքեր

մուտ գտնեն իրենց մէջ ու իրենց հացը կորդեն . այս առթիւ թուեց այն բաղձագիմի յատկութիւնները զորս հայերը իբրև պուլկարեան անբռնաբարեղի ժառանգութիւն տաճկաստանէն՝ հիւր բերած էին :

Պուլկար Թերթը չէր սխալած իր տեսութեանց մէջ , հայերը , իրենց բնածին տաղանդով ու աննկուն քանապիտութեամբ նետուեցան ասպորեղի մէջ , արհամարհելով ամեն գժուարութիւն , նոյն իսկ ինչո՞ւ գոհ ըլլալով . մէջերնին շատեր կային որ իրենց բնավայրին մէջ 40—50 դրը . աւուրչէք կը ստանային , բայց հոս բաւականացան օրական 5—10 դրուշով :

Եթէ երկիրը թոյլատու ըլլար այսքան ճարտար արհեստաւորներ իր ծոցին մէջ ապրեցնել , հայերը այս համբերատար ոգին շարունակելով՝ պիտի վերջապէս գրաւէին բոլոր գործի հրապարակը , ու տեղացի տարւր պիտի մնար ափիբերան :

Պուլկար Թերթը այս վախճանը կանխագուշակելով էր որ այս հրապարակային յորդորը կընէր , և իրաւամբ :

Վառնա աւելի բախտաւոր գտնուեցաւ ստեղծալն միւս քաղաքներէն , Պոլսական ճարտարապետութիւնը որ բացարձակագէտ անձնօթ էր Պուլկարիոյ գրեթէ բոլոր քաղաքներուն մէջ , երկու հոյակապ շէնքերով ցոյց տուաւ իր կիրթ ճաշակն ու նուրբ արուեստը . Ս . Սարգիս եկեղեցւոյ շրջափակին մէջ բարձրացաւ վարժարան մը ու Զար . Պորիս հրապարակին վրայ Բանուկեան հոյակապ շէնքը , որք իրենց տեսքով ու գիրքով կը գրաւեն այսօր օտարազգիներու իսկ ունն ու ուրուշը :

Այս երկու շէնքերն , որոց ճարտարապետն էր Տիար Թորոս Թորամանեան , աւբողջովին հայերու ձեռքով շինուած , պիտի մնայ յաւէտ անմոռանալի յուշական մը հոյ ճարտարութեամբ և մեծ պարծանք մը հայ ազգին , որ օտարութեան մէջ իսկ գիտէ անմահացնել իր անունը :

—o—

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

— 0 —

Պատահական Թղթակից

Շուկա, 10 Դեկա.

Եկեղեցւոյ Սրբապետ Անդրեան Թատրոնի մէջ

Երէկ իրիկուն Շուկայ հասայ: Տեղւոյն վարժարանաց մասին բաւական գոհացուցիչ տեղեկութիւններ առի. բայց կը ցուիմ որ զգացած գոհունակութիւնս պահ մը վերջը տխրութեան փոխուեցաւ, հետեւեալ իրողութիւնը իմանալով.

Եւոյ. 8 շաբաթ գիշեր Պ. Ֆատուլեաճեանի խմբին կողմէ ներկայացումը կը տըրուի, ու Եկեղեցւոյ Ս. Մեռնոյ սրբապետեալ խաչը Թատրոն կը տարուի: Մինչեւ հիմա մեր գիտցածը սա է որ խաղի մը մէջ պէտք եղած խաչը պարզ փայտէ կամ խաւաքարտէ կը շինուէր, Սրբապետ Մեռնոյ օձեալ խաչը Թատրոնին վրայ հանել պարզապէս ամբարշտութիւն մ'էր: Կը ցուիմ ըսել թէ՛ շատ անգամ Պուլկարիոյ հայաբնակ քաղաքներուն մէջ այսպիսի Թատրոնի ներկայացումներ տրուելու ժամանակ եկեղեցական անօթները ինչպէս են վարագոյրներ, աշտանակներ են. կը տարուին եղեր 'ի Թատրոն:

Թաղ. Խորհուրդներուն պարտքն է չի թողուլ որ այսպիսի զեղծումներ գործուին կարգ մը իմաստականութիւն ձեռքով, որոնք կըրոնի վրայ գաղափար չունենալով՝ ընդհակառակն զայն կը ծաղրեն:

ՄԻՀՐԱՆ

Հայելի

Ի՞նչ կընեն արդեօք մեր տէրպապաները, որոնք եկեղեցական սրբապան անօթներուն անեղծ պահպանմանը աւագ պարտականութիւնը ստանձնած են: Ի՞նչ կընեն տեղւոյն քահանան, կը քննանայ. Ի՞նչ կընեն նաեւ Թաղ. Խորհուրդը: Այդ Ս. խաչը, որուն առ-

ջե հաւատացեալը երկիւղածութեամբ կ'երկիրպագէ, և զոր ըստ եկեղեցական օրինաց հինգ աստիճան չունեցող աշխարհական մը եկեղեցւոյ մէջ իսկ չի կրնար ձեռք առնել, այն խաչը ի՞նչպէս կը թողուի որ դերասաններուն ձեռքը խաղի առարկայ դառնայ: Տեղւոյն քահանան իբրեւ խղճամիտ եկեղեցական ի հարկէ թոյլ տալու չէր Թատրոն տարուելուն: Ինչո՞ւ իր այս պարտականութեանը մէջ թերացաւ:

Թաղ, Խորհուրդներն ալ պէտք է գիտնան որ Թատրոններու մէջ տրուած ներկայացումներ որչափ ալ բարոյալից ըլլան, միշտ խաղ (օյուն) կը կոչուին, հետեւաբար, եկեղեցական սրբապան անօթները այդ խաղերուն գործիք ընելը՝ պարզապէս եկեղեցին անարգել կը նշանակէ: Եւրոպիոյ ամենէն ազատ երկիրներուն մէջ իսկ ցարգ լսուած չէ որ եկեղեցական անօթները Թատրոններու վրայ հանուին: Մեր ազգը իր եկեղեցին ունի է որ կանգուն կը կենայ ու կը պարծի. ուրեմն անոր դարաւոր սրբութիւնը պարտաւոր ենք անեղծ պահել:



Ձուկն ու հիւրը երկու օր վերջը գէշ կը հոտին:

Դոյլ երիտասարտութիւնը կարօտ ծերութիւն կը բերէ:


Հետը պզտիկ տղաքներ ունեցող հիւրը անհամբարտութիւն կը պատճառէ:

Աշխարհիս մէջ բարբարոսն անգամ սիրելի է եթէ ոսկի և ագամանդ դիպած է:

— 0 —

ԽԱՌՈՒԱԾ ԱԿՆՑԻՆ

(ԻՐԱԿԱՆ ԴԵՊՔ Ի Կ. ՊՈԼԻՍ)



— Խօսեցէք, ըստ Պատրիկի .

— Էֆէնտըմ, մայիւմիդ է ուր՝ անցած Բէճէպի չէրիֆին երկիրը մեր հարսան ձեզի օրեր մեռեր էր :

— Աւաղ, կարծեմ թէ իմացանք աւտանկ բան մը :

— Անցածներս Միհրան աղային տիւնէն ձեր խանութը եկեր էան, Աստուած պետականութիւնը չար նաղարէ վէ աչկէ պահէ, սէլփի պոլի հանում ախշինը տեսայ իսէ՛ մեր լուսափօքի հարսան տեսածի պէս եղի : Պարձ խորթինը, Աստուածային հրամանաւ վէ կանօնիւք Ս. հայրապետաց ան հանումը ինծի հարսա կուզիմ առնել : Միտքըդ կուզայ, ֆէսս էկած օրերնին բեզի ալ հարցուցայ :

— Այո՛, հարցուցիք .

— Էնձամիւլըբէլամ, աս խնամիութիւնը Միհրան աղային հախուն ալ խայրըլու արլի՝ մարդ եինք, ըմմէն ատեն իրարու պէտքաւորութիւն ունինք : Էկէր ուր բամմանքդ աս գործը սրբայի գնելու մէջ իւսթիւն էլլուս իսէ՛ էլմաս մայնի մի մուստդ աի գնիմ :

Պատրիկ այս անակնկալ առաջարկը որ լսեց, զարմացաւ ու սկսաւ մտածել . հիմակ կը հասկնար անոր 100 ոսկի փոխառուութեան համար շուտ մը հաճութիւն տալուն պատճառը, ինչպէս՝ նաեւ իւսկիւտարի չոգեանուն մէջի հանդիպումը Միհրան աղային չիմայնելու համար իրեն եղած ստիպողական առաջարկին պատճառը, (որպէս զի Միհրան աղա աննպաստ գաղափար մը չունենայ անոր գինութիւնը լսելով,) սակայն այս վերջին առաջարկը Պատրիկի կարծիքով անկարելի էր ընդունուիլ, վասն զի, իր իմացածին նայելով Օրիորդ Բուրմինէ պիտի նը-

չանուէր դաշնակի դասաւոր միւսիւ . Լեւոնին հետ : Պատրիկ որ նեղ կայութեան մէջ էր, խոհեմութիւն համարեց առ այժմ այս մասին բան մը չի յայտնել, զի թէոր յայտնէր, Արեւիկն իր փոխառացած փոխառութիւնը չընելով, վաճառատան գործը պիտի վըտանգուէր :

— Ի՞նչ տիւշիւնմիւլ կըլլիս, Պատիկեր աւաղա, հարցուց Աստիւր աղան, սուրճին գաւաթը բերնին մօտեցնելով, աս իֆատէիս խապուիչէթ գննելուն վրայօք շիւպհէ՞ մի ունիս :

— Ոչ . . . ընդհակառակը . . .

— Էլմաս մայնին մուտքէդ մի հաներ, էկէր բամմանքդ զայրէթդ գաթան ախրի չանիս իսէ, աս մատտէն թէսփիյէրէզիւր կըլլի :

— Եր խառանամ այս մասին Միհրան աղային հետ խօսիլ ու ձեզի իմացնել .

— Քու խելքդ ի՞նչ կը կըլլի :

— Կը յուսամ թէ աղէկ պատասխան մը առնենք :

— Ատ տէրէճէ տիւշիւնմիւլ ըլլալէդ աս շիւպհէ կանիմ ուր . . .

— Ոչ, ոչ, նս տոոր վրայ չեմ մտածեր կոր, փոխառութեան վրայ է իմ մըտած մտնքս :

— Սա ալ բեղի կըսիմ ուր՝ մենք Արեւիկի եինք . տիւպառաի չինք գար .

— Ադ ի՞նչ խօսք է .

— Սանքի Ըսել կուզիմ ուր՝ չինք խաբուիր :

— Ատանկ բան մը ո՞վ մտքէն կանցունէ :

— 22 գիտիմ, հրմայեկս աս մեր ընելիք 100 նիրայի խթիգբաշին հրմայէ կմրէ մուհարրէր 10 օրուան վատէյով սէնէտ մի տի տաք .

— Բայց 10 օրէն չինք կրնար վճարել :

— Քէրէմ արէ . երբ աստուածպետականութեան հիմնութիւնը Պատգիւրարբարանի մէջ մեր նիշանը կ'օրհնուի սէլփի պոլի հա-

նույն հետ, անի սահմանն ան 10 օրուան վատելի սէնէտը տօխտան պիտի կիւն վատելի թէպախլ տըլլի:

Այս առաջարկով խոստանի Արտիւր աղա գործը ողջի կապել կուզէր, այսինքն, թէ նոյն 10 օրուան մէջ նշանտուքը չըլլար՝ կրնար Միհրան աղան անանկութեան դատապարտել նոյն Պննօթին միջոցաւ:

Պատրիկ այս ամենը հասկնալով, խոստացաւ հետեւեալ օրը գահացուցիչ պատասխան մը բերելու: Եւ իրարմէ բաժնուեցան, (նար.)

ԱՆԿՈՉ ՀԻՒՐԵՐ

Պատուաւոր ընտանիքի հայր մը, իմանալով որ կարգ մը թեթեւոյիկներ՝ սան—Փասօն մտնելու տեղական սովորութիւնէն օգտուելով՝ հարսանիքի տունները իրենց անվայել ընթացքին ժամադրաւոր ընելու որոշում առած են, իր ժօտակայ նոյն օրինակ հանգեսին առթիւ այժմէն միջոցներ ձեռք առած է այդ կարգի պարսնները իրենց խելագատակէն չանցած պատիւներով հիւրընկալելու:

ԿԱՌԱՅԻՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ

— 0 —

ՏԳԵՂ ՊԵՏԱԿԵՐՆԵՐ

Պրնցի լու տրհնատաւոր գաղթական երիտասարդ մը փափաքելով ամուսնանալ, ասկէ երկու երեք շաբաթ առաջ տեղւոյս բարեկեցիկ ընտանիքներէն մէկուն աղջկոտեսի փերթայ, առանց դրամօժիտի:

Աղջկան ծնողքը, որ արդէն հարցուցած բնաւած էր երիտասարդը, աղջկոտեսէն քանի մը վերջը իրենց այցելութիւն տուող բարեկամ ընտանիքին ալ միամտաբար կը հարցնեն թէ, արդեօք կը ճանճան յիշեալ երիտասարդը և ի՞նչ գաղափար ունին անոր բարուցը և վարուցը վրայ:

— Մենք չենք ճանչնար ամա, մէջերնիս մէկը կայ, կրնանք անկէ աղէկ մը հասկնալ ու ձեզի իմացնել, պատասխանելով խօսքը կը գոցեն:

Երկու օր ետքը, իբր թէ հարցուցած բնաւած ըլլան, լուր կը ղրկեն աղջկան ծնողացը թէ, աւելի աղէկ կընեն զաւակնին ծովը նետեն քան թէ այն երիտասարդին տան: Այսպէս զանոնք խաբելէ ետքը մէջերուն մէկը կը ղրկեն երիտասարդին, առաջարկելով որ պատրաստ են 200 ոսկի դրամօժիտով իրենց աղջկը տալ, հետեւաբար աղջկոտեսի կը հրահրեն զայն:

Երիտասարդը — Բայց ես դրամօ չիտով աղջիկ տունել չեմ ուզեր:

— Եղբայր, աւելորդ ապրանքը աչք կը հանէ, աղջկան հօրմէն մնալիք ժառանգն է:

Ու յաջորդ կիրակին աղջկոտեսի կերթայ:

Աղջկոտեսէն քանի մը շր վերջը այս Բաղջկան ծնողքը բազմիք երթալով, հոն կը տեսնեն իրենց բարեկամ ուրիշ ընտանիք մը, որ արդէն իմացած ըլլալով աղջկոտեսի համած ըլլալին, կըսեն:

— Բխնջնուս ձայն մը եկաւ որ հանդը աղջկոտեսի էք հաներ:

— Անանկի պէս բան մը, բայց ասկաւին յայտնի չէ:

— Այնինչ անէին:

— Հրաման էր:

— Եթէ ես ձեր տեղն ըլլայի, մալին թեմէն անգամ չէի ցուցներ, որովհետեւ, իմացածնուս և ստուգածնուս նայելով շատ գէշ տղայ մըն է եղեր. թէ գիշերները մինչև ժամը 2 քիներտունէն լղուրս չելլեր եղեր, և թէ:

Այս ամբաստանութիւնը լսող ու այն միջոցին անոնցմէ մէկուն գլուխը լուալու վրայ եղող կին մը խօսքի մէջ խառնուելով կը գոչէ. — Ա՛յ կընէք հանրմ, բէք ետդը՜ հտվատիս էք առեր, տիւշմանի խօսք է, իմ վրայիս պէտքի բան մը չէ ամա, ես ան տըզան կը ճանչնամ նէ:

Երիտասարդը պատարակող կինը աչքի նշանով մը լուսավորան կը հրաւիրէ այն կինը ու ինքը կը շարունակէ իր անդուր զրպարաւթիւնները տեղալ երիտասարդին վրայ :

Քիչ մը ետքը առիթ կը գտնայ նոյն գլուխ լուսացող կնոջ հետ առանձինն խօսակցելու :

— Գունն ան աղան կը ճանչնաս ,

— Հասկո՞ւ :

— Քէրկէ կը ճանչնաս ,

— Թէ՛յ Ստանպօղէն :

— Մենք ալ կը ճանչնանք աղէկ տըղայ ըլլալը ուստի եթէ յաջողիս գայն իմ աղջիկներէս մէկուն ընել՝ քեզի երեք նաւօղէն խլամուղէք կայ :

Աինք երեք նաւօղէնին անունը լսելուն պէս՝ գործը կը ձգէ կը հագուի ու խաբար-ջախ ճամբան կապելով՝ ուղղակի երիտասարդին մօրը վրայ կէտնայ :

(Շար .)

Խմբագիր Տէր .

Յանուն անկողնակալութեան հաճեցէր հրատարակել հետեւեալը .

Առ Պ. Դիսոյ

Հարստեանց հանդէսի մը պատահմամբ ներկայ գտնուող ինքնակոջ հիւրը աւելի պատարակելի է իր անմեղ ներկայութեամբը , թէ ոչ՝ նոյն հարսնիքին մէջ գտնուող 7 ամուս յղի կինը , որ երկէ—մարդու մը գէմն անցած , անոր հետ Գէօյեֆ հալխաւի կը խաղայ Դի ներկայութեան հարիւրաւոր դուռ — զրաքի հանդիսատեսներու , որոնք զինքը ծաղր ու ծանակ կընեն :

Դիսոյէդ աղէկ Դիսոյ



ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

Պուլկարիանըն պիւր շէհրինտէ իշի ահագոյաւ արասընտա ճէրէյան իսէն պիւր միւր քեալէմէ :

— Բարեհա՛ թորոս աղա պէ՛ . նա՞բարտըն պապալըմ . քէֆին ո՛ւղ մու .

— Բէք իսլահ պէ՛ , սէն նաալըն :

— Օ աէյիլ ամա իշիթտիմ՝ քի սէնին . քիլէրինի Դիկոյոս աղա տիշարը աթմըլ էվտէն , շիմտի Սամիկ աղա կիլէ թաշնմըշար :

— Պանա նէ՞ , պէ՛ , իսթէտիլէրինի ետսընլար :

— Էյի ամա , պու շէյլէր մէմէթէթիմիլէ եաքըշմաղ . իշիթտին հա՛ . Կէշէյէրտէ իշի տիպաճաւընտան «Հայելի» եաղմըշ ըտ . օ սէֆէր իսիմ վէրմէմիշ իտի , պէլէքի պիւր տահա սէֆէրտէ օնուտա եաղսըն : Էլ ալէմին գարշընա նա՞սըլ չըգաճաղըլ :

— Այլինիպ գուշանըպ էյիլէ չըգարըլ պէ՛ :

— Էնքաս տէմէյօրըմ սանա .

— Նէ՞ եաբայըմ՝ աղբար , իւչ քէրէ տիր պապասընա վէ աճաւընա սէյլէտիմ . գայնըմն թութտուղու եօլա ագլըմ՝ էրմէյօր :

— Հա՛ , էյի իսթըրմա կէլտի . իշիթտիմ քի օղլու գըլլըրն քէնտիտի տէ անա-սէյլա . . .

— Քէհա՞տ մը օյնասօրլար ըմըլ :

— Խալըր , վազըթ կէչիթիօրլար ,

— Ամա ետսըն հա պէնտէ . պէն գայնըմտան ումմամ :

— Ումմասըն ամմա , ումմատըղըն թաշ պաշ ետար տէրլէր :

— Էյ նէ՞ ետսըն , չօճուղու պիւր աղ անաւակ , ումտուղու եէրէրտէն գըլ վէրմէյօրլար , էսկի հալի տէ գալմամըլ քի տըշարտա հարճամագ իշին օղլունա փարտ եէթիշտիլին . նէ՞ զարարը վար . գըսմէթ կէլմիշ . պէտէ հալաճըգ պիւր շէյ . վարսըն կէչինսին :

— Էյ պապա՞սը :

— Օ զափայլունն գործըստ պիր գաշ սէնէ տիր էօլմիշ, պիր տա՛հա էվլէնմէտի-
ղինաէն . . .

— Նիշի՛ն էվլէնմէտը .

— Եէթիշմիշ էվլատլարը վար .

— Հա՛, տղետարմ .

— Օնուշտան օ առ անտորըյլա վագըթ
կէշիրեյօր ըմը :

— Ղէսաէլամ :

— Ֆապսթ, պունունլա պէրտպէր ի-
նունմամ քի գայիւրմ պու գոտար աշիքեսարէ
պիր նապէճա հայտէ պուլունսուն .


— Նիշի՛ն ինանայօրսն . էսկի էվ սո-
հապը Զէնսն աղանքն սէօղիւնէ պագըլըրսա՛
գօմշու գարունսնաան օղլու շրգար՝ պապասը
կիրէր իմիշ :

— Չուլհա՞մէքիկի մի պունլար ոլէ .

— Նէ՞ պիլէյիմ :

— Աման գարտաշ, պու լափլարը պաշ-
կապնա սէօլէմէ, Էշրին գուլաղը վար աէր-
լէր, տիլաէն տիլէ պօյալարը մէյաանա շրգըպ
էլ ալէմէ կիւլինճօլուրլար :

— Էօլէ իսէ ալէմին տիլինտէն գուր-
թուլմագ իշին հէրիֆին գարըսընը քէնտիսինէ
թէպլիմ էթսինլէր քի ֆօյալարը մէյաանա
շրգապսն :



Էրկու Բարեկամք

— Ամեն առաւօտ եկեղեցի՞ կերթաս :

— Այո՛, ամեն առաւօտ . աղօթք կընեմ
ու կը խնդրեմ Աստուծմէ՛ որ ամեն օրուան
հասց տայ :

— Ինչո՞ւ ամեն առաւօտ, և ոչ շաբա-
թը մէկ անգամ .

— Ղաան զի կուգեմ որ ամեն օր թարմ
ընդունիմ հասց :

Մայրի՛կ, կը գոչէր անցեալ առտու տունի
վարպետ գացող տղայ մը, ասկէ ետքի՛ց ցորե-
կին ինծի ուտելիք աղւոր կերակուր մի գներ
մինակ պտնիր հաց զրկէ .

— Ինչո՞ւ ետքորում .

— Ղարպետ տուտուիս աղջիկը Եօլլա-
մաի կեյլայ թէֆսիիս, աղւոր կերակուր առ-
նածին պէս կատուն կերաւ ըսելով ինք կը
ճթկի՛ ինծի չոր հաց կը ձգէ կոր :

— Ղու՛յ երկու աշկը էլլայ :

— Ասոր համար կըսեմ քի՛ պտնիր
հաց գնես :

— Էյ բանիր հացն սիրտդ կը բռնէ .

— Չոր հացէն աղէկ է նա՛ :

Տ Պ Ա Ր Ա Ն .



ՀԱՆԴԻՍԻ

Այցեւորման, հասցեւորման. նամակա-
դրութի, հրահրատման, բարեկեցիչ, ամու-
սակ, ևայլն ևայլն թէ՛ պարզ և թէ՛
սովորածեալ սէկ քանի դոյներով կը օը-
պագրուին : Ֆաղաքներէ եկած յանձնա-
րարութիւնք փութով կը կատարուին .
Գին գահացուցիչ, Դիմէլ հոյելի խըմ-
բագրութեան :

Վարկեւակաւ Տպագրութիւն

Ա Յ Յ Ե Տ Ո Մ Ս Ի

100 հաւը 2 ֆր. ի կը տպագրուի և ա-
նոր տուիին մէջ կը գտնուի Այցեւորման գոր-
ծածութեան հրահանգը պարտաւորող անտրակ
մը, որուն կողքին վրայ այցեւորման տիրոջ տ-
նունը տպագրուած պիտի ըլլայ : Դիմել խմբա-
գրութեան քաղաքներէ ըլլալիք յանձնարա-
րութեան թղթաւարի ծախք 30 սանդիկ
յաւձնարարողին վրայ է : Դրամի փոխարէն
Պուլկարական 5, 10 և 15 սանդիմնաց նա-
մակադրոշմ կ'ընդունուի : Կանխիկ :



ԻՆՍՏԻԹՈՒՏԱՆ ԺԱՇՆԱՐԱՆ

Թորոս Մուրաշեան

Հին նամակատան փողոց, դուպախ
գործարանին դեմը, Թիւ 14:

Սոյն նորահաստատ ճաշարանին ժեշ կը
պատրաստուին համագամ կերակուրներ:
Վատուարժան յաճախորդք խիստ գոհ պի-
տի մնան թէ ուտելիքներէն և թէ գինե-
րու չափաւորութենէն:

3

ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ

Մարտին Աւսլան



4րդ Թաղ, Թիւ 218

Գործիք կատարելագործեալ Գին չափաւոր

ԼՐԲԼՅԻՆ ՅԵՆՏԻ

ԳԱՐԸՅԸ ԵՒՆՏԻ

Գրք կէճէլէրինէ մախաւս զայնթ կիւ-
լիւնճի զէ էյէնճէլի իշպու զօնէար 32 սա:

հիֆէտէն խորտէթ օլուպ, հրուֆաթը էրմէ-
նիճէ զէ լիտանը թիւրքճէ օլարապ վարնասա
թիւթիւնճիւ տիւքքեանլարընաս 30 սանթիթ
ֆիտիթէ սաթըլմագուս տըր: Թաշրալարանն
խթէյէնլէր կալընրդ 30 սանթիթլիք բօթա
բաւը զիրտէ մուհարրէր նամըմա կէօնտէր-
մէլի տիրէր:

Մ. ԽԱՉԻԿԵԱՆ, 2 նճի Ուշտաթ, 1104

Վ. Ա. Թ. Ն. Ա.

Պաշտան պէօյլէ սաիր էյլէնճէլի զէ ֆա-
խէլի պօմէարիէր տախի բէյաէրէյ նէլը օ-
լունաճաղը Էէյան օլունըր:

—o—



ՄԵՔԵՆԱՅԻՑ ԳՈՐԾԱՐԱՆ

Եւ Զոյարան

(ՎՈՒՂ ՅԱՐԻԱ)

Գ. Յ. ԲԱՐԹԱՄԵԱՆ և Բ. Է. ԲԱՆՉՈՒԳ

Վազնա 5րդ Թաղ Ելարդ Թապիւս

Ամէն տեսակ մէքենաներու շինութիւն և
նորոգութիւն, ջաղացքի թէ շոգիով և թէ
պարզ ջուրով գործող մէքենաներ, նաեւ շո-
գեմակոյցներ. ջաղացքի վերաբերեալ ամէն
տեսակ երկաթայ գործիքներ, զրամական
գասաներ, շէնքերու յատուկ երկաթեղէն-
ներ, տեսակ տեսակ ջրհաններ և այլն և այլն
կը պատրաստուին: Պատ. Յաճախորդք միշտ
գոհ մնացած են սոյն գործարանի շինու-
թիւններէն:

—o—



ԳՈՒՇԼԿ

Ո. Պ. Ա. Գ. Ա. Յ. Ի

Կամ Զուարճալի Բաղդադացի
ընտանեկան

Երկուսն ամէն հասակի ընթերցողաց ըղ-
բօսալի ժամանցներ տառող սոյն գիրքը կը
ծախուր մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով
գիմել մեր խմբագրութեան:

Отговоренъ редакторъ: Н. Драгулев

Imprimerie Orientals, Varna.